

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի _____ -ի

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 988-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N _____ - Ն

ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման և նոտարիատի գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» N 988-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) որոշման վերնագրում, որոշմամբ հաստատված NN 1, 2 հավելվածների վերնագրերում «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ» բառերով,

2) որոշման նախաբանը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը, 11-րդ հոդվածի 1-ին կետի «Ժգ» ենթակետը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.»,

3) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման և նոտարիատի համակարգերը վերակազմավորել Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման և նոտարիատի գործակալության՝ հիմնարկի առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով:»,

4) որոշման 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառերով,

5) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի.

ա. 1-4-րդ, 6-րդ կետերում, 8-րդ կետի 1-ին ենթակետում, 10-րդ կետում, 11-րդ կետի 7-րդ ենթակետում, 14-րդ կետի 2-րդ պարբերությունում, 15-րդ կետում, 16-րդ կետի 3-րդ ենթակետում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառերով,

բ. 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Գործակալությունն իր գործունեությունն իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությանը, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերին և իրավական այլ ակտերին համապատասխան և դրանցով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում:»,

գ. 6-րդ կետում, 11-րդ կետի 9-րդ ենթակետում, 12-րդ կետի 6-րդ ենթակետում, 14-րդ կետի 2-րդ պարբերությունում, 16-րդ կետի 2-րդ և 14-րդ ենթակետերում, 18-րդ կետի 11-րդ ենթակետում, 19-րդ կետի 13-րդ ենթակետում, 20-րդ և 22-րդ կետերում «այլ իրավական» բառերը փոխարինել «իրավական այլ» բառերով,

դ. 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Գործակալության կենտրոնական մարմինը և քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային ստորաբաժանումներն ունեն Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և իրենց՝ հայերեն անվանմամբ կլոր կնիքներ, ձևաթղթեր, խորհրդանիշներ և անհատականացման այլ միջոցներ:

Գործակալության կառուցվածքային ստորաբաժանումն ունի ձևաթղթեր, խորհրդանիշներ և անհատականացման այլ միջոցներ: Նոտարական գրասենյակներն ունեն Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և իրենց՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանմամբ կլոր կնիքներ, ձևաթղթեր, խորհրդանիշներ և անհատականացման այլ միջոցներ:»,

ե. 8-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին կետ.

«2.1) քաղաքացիական կացության ակտերի գրանցման ավտոմատացված տեղեկատվական բազայի ձևավորման ապահովումը.»,

զ. 11-րդ կետի 2-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

է. 11-րդ կետի 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) Արցախի Հարապետության կառավարության կողմից հաստատված ծառայությունների ցանկին և այդ ծառայությունների վճարների չափերին համապատասխան մատուցում է ծառայություններ.»,

ը. 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13. Գործակալության տարածքային ստորաբաժանումներն իրականացնում են «Քաղաքացիական կացության ակտերի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքներով, այլ օրենքներով և իրավական այլ ակտերով նախատեսված գործառույթներ և գործողություններ:»,

թ. 14-րդ կետի 1-ին պարբերությունից, 17-րդ և 21-րդ կետերից հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը,

ժ. 16-րդ կետի 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) լսում է գործակալության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների գործունեության մասին հաշվետվությունները, քննարկում դրանց գործունեության ստուգման արդյունքները.»,

ժա. 16-րդ կետի 12-րդ և 18-րդ կետի 6-րդ ենթակետերից հանել «և կնքում» բառերը,

ժբ. 16-րդ կետի 13-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13) մատուցում է վճարովի ծառայություններ.»,

ժգ. 18-րդ կետում «վարիչը» բառը փոխարինել «պետը» բառով,

ժդ. 18-րդ կետի 7-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

ժե. 19-րդ կետի 9-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9) մատուցում է վճարովի ծառայություններ.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2019 թվականի _____

ք. Ստեփանակերտ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԼԵՈՒՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 988-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1.	Առկա իրավիճակը, կարգավորման ենթակա ոլորտի սահմանումը. կարգավորման նպատակները
	<p>Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման և նոտարիատի գործակալությունն իր գործունեությունն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման և նոտարիատի գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» N 988-Ն որոշման համաձայն:</p> <p>«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 988-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծով, մասնավորապես, առաջարկվում է, Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման և նոտարիատի գործակալության կանոնադրությունը համապատասխանեցնել Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին:</p>
2.	Ակնկալվող արդյունքը
	<p>«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 988-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման դեպքում Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման և նոտարիատի գործակալությունն իր</p>

	գործունեությունը կիրականացնի Արցախի Հանրապետության օրենսդրական (մասնավորապես, «Քաղաքացիական կացության ակտերի մասին», «Նոտարիատի մասին», «Պետական կառավարչական հիմնարկների» օրենքների) և ենթաօրենսդրական (մասնավորապես, Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրին) իրավական ակտերին համապատասխան:
3.	Նախագծի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը
	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 988-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի նորմատիվ բնույթը կայանում է նրանում, որ նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի նորմատիվ իրավական ակտով («Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մաս):
4.	Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք
	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 988-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման բաժնի ու Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման և նոտարիատի գործակալության կենտրոնական մարմնի կողմից: